բոլոր ճառախոսները անգուսպ յարձակումներ էին գործում Հայաստանի կառավարութեան և Դաշնակցութեան վրա։ Խորհրդարանի դաշնակցական պատգամաւորների փորձերը՝ զգաստութեան հրաւիրելու՝ առաջ էին բերում աննկարագրելի աղմուկ ու բողոք։ Բանը հասաւ այնտեղ, որ պատգամաւորներից մէկը՝ սոց.–յեղափոխական Սաֆիքիւրդսկին առաջարկեց հեռացնել Ադրբէջանի Խորհրդարանից դաշնակցական պատգամաւորներին։ Միայն երկու հոգի փորձեցին քննադատել և՛ Ադրբէջանի կառավարութեան պրովոկացիոն ընթացքը։ Ընկերվարական Աղամալի Օղլին և Ասադ Քարայևը բաց կերպով ամբաստանեցին կառավարութիւնը, որ Կարսի արբունոտ դէպքերը սաեղծուած են Բաքուի դրդումով։ «Եթէ կառավարութիւնը անմեղ է, բացականչեց Քարայևը, այն ժամանակ ինչպես՞ է այն միլիոնները, որոնք ուղարկուում են Հայաստան»։

Եւ մինչ Ադրբէջանում չանթ ու որոտ էին թափում, Կարսում կեանքը արդէն խաղաղել էր։ Հէնց որ ըմբոստ շրջանները յայտնեցին հպատակութիւն, դինուորական միջոցները վերջ դրան, և ժողովուրդը անցաւ սովորական աշխատանքի։ Հայաստանի ոչ մի շրջանում հայ–մահմետական յարաբերութիւնները այնքան լաւ չէին, որքան Կարսում։ Այդ բարի–հարեւանական յարաբերութիւնների ցուցադրութիւն եղաւ Կարսի քաղաքային խորհրդի արտակարգ նիստը փետրուար 17–ին՝ մասնակցութեամբ քիւրդ և թուրք բնակչութեան ներկայացուցիչների։

Խորհրդի նախագահը բանալով ժողովը՝ դիմեց քիւրդ և թուրք ներկայացուցիչներին ողջոյնի խօսքով՝ ասելով, որ եթէ նրանք որոշել են հայերի հետ ապրել հաշտ ու խաղաղ, հայերի կողմից էլ կը գտնեն նոյն եղբայրական անկեղծ վերաբերումը։ Պատասխանեց Գէոլի շրջանի ներկայացուցիչ Թալի բէգը՝ յայտարարելով, թէ պատահած ցաւալի դէպքերի ամբողջ պատասխանատուութիւնն ընկնում է եկեղեցական խռովարարների վրա։ Եթէ Հայաստանի կառավարութիւնը մոռանայ այդ թիւրիմացութիւնները և լաւ վերաբերուի իրենց հետ, իրենք խոստանում են լինել Հայաստանի Հանրապետութեան խաղաղ և օրինապահ քաղաքացիները։

Ապա, ի պատասխան բանտրների և գիւղացիների ողջոյնների, խօսեց Մուրդանի շրջանի ներկայացուցիչ Արիֆագանը։ Սա ևս պնդեց, որ բոլոր դէպքերի պատճառը դրսից եկած դրդիչներն են և որ տեղական ազգաբնակութիւնը ձգտում է խաղաղութեան։ Առանց հայերի, ասաց նա, մահմետականները չեն կարող ապրել. մի քանի ամիս ևս այսպիսի կեանք, և մահմետական շրջանները քար ու քանդ կը լինեն ու կը փչանան սովից։

Նոյն միտքը յայտնեցին և Զարուշատի ներկայացուցիչները՝ Բաղրը աղա Մահմէդ Օղլին և Զալիլ աղա Մահմէդ Օղլին։ Սրանք ևս «ցաւալի դէպքերը» բացատրում էին արտաքին դրդումներով և խոստանում լինել հաւատարիմ Հայաստանի Հանրապետութեան՝ այն յուսով, որ «հայերն ու մահմետականները կապրեն եղբօր պէս, ինչպէս ապրում էին Նիկոլայի ժամանակ»։